**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

թիվ 207
03 մայիսի 2021թ.

Հարգելի պարոն Մեսրոպյան

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Մրգաշեն համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 30-ին կայացած թիվ 04 արտահերթ նիստի որոշումները էլեկտրոնային տարբերակով:

Առդիր 9 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Շողիկ Ղազարյան
Հեռախոս՝ (093) 63-19-50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22
վարչական շենք mrgashen.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2021 թվականի N 68–Ա

## ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ԹԻՎ 04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 30-ի թիվ 04 *արտահերթ նիստի օրակարգը.*

*Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով <<Մրգաշեն համայնքի գլխավոր հատակագծի մշակում>> ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հաստատելու մասին:*

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ.Ասատրյան | / / | | |
| Ձ.Արամյան | / / | | |
| Մ.Խաչատրյան | / / | | |
| Դ. Հակոբյան | / / | | |
| Գ. Մուրադյան | / / | | |
| Դ.Նիկողոսյան | / / | | |
| Մ. Վարդանյան | / / | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք mrgashen.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2021 թվականի N 69-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով <<Մրգաշեն համայնքի գլխավոր հատակագծի մշակում>> ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը (հայտը կցվում է)։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Կողմ Դեմ Ձեռնպահ

Մ.Ասատրյան / /
Զ.Արամյան / /
Մ.Խաչատրյան / /
Դ. Հակոբյան / /
Գ. Մուրադյան / /
Դ.Նիկողոսյան / /
Մ. Վարդանյան / /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՏ

**Մրգաշեն համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | *Մրգաշեն համայնքի գլխավոր հատակագծի մշակում* |
| Մարզ | *Կոտայք* |
| Համայնքը /համայնքները | *Մրգաշեն* |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | *Համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից 17կմ մարզկենտրոնից 40, կմ* |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | *Համայնքի բնակչության թիվը 2181մարդ* |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի | |
| Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | *Ոչ /գլխավոր հատակագծի մշակումը ներկայացված է այս սուբվենցիայի ծրագրով/* |
| Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br><br>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,<br><br>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,<br><br>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,<br><br>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ | Համայնքի ջրամատակարարման համակարգի 80% -ը ենթակա է հիմնանորոգման, որից օգտվում են բնակչության 95%, իսկ ջրահեռացման համակարգ առկա է 70% - ով, խմելու ջուրը մատակարարվում է շուրջօրյա, ոռոգման ներհամայնքային ցանցի 75% ենթակա է հիմնանորոգման, համայնքում ոռոգման համակարգից օգտվում են բնակչության շուրջ 80%-ը: Համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքները կազմում են շուրջ 65%-ը: Փողոցային լուսավորության համակարգը անցկացված է 90%-ով էլեկտրաէներգիայի ցանցի 20%-ը ենթակա է հիմնանորոգման, համայնքը գազաֆիկացված է 75%-ով: |

| | |
|---|---|
| | |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | *Համայնքի գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակն է՝ համայնքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը և որի արդյունքում պետք է կանոնակարգվեն՝*<br>- *բնակավայրերի և դրանց սահմաններից դուրս գտնվող կառուցապատման ենթակա հողերի նպատակային և գործառնական նշանակությունները, հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջները, սահմանափակումները,*<br>- *կառուցապատման հերթականությունը,*<br>*հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման ձևերը, առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման չափորոշիչները:* |
| | |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *Տվյալ ծրագրի իրականացումն ունի երկարաժամկետ բնույթ, որն էլ իր ազդեցությունը կունենա համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունների , հող հատկացումների և այլ նմանատիպ գործընթացների ավելի հեշտ և կարճ ժամկետներում իրագործման համար:* |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | 1. *Գլխավոր հատակագծի մշակում*<br>2. *Աշխատանքների կատարման մրցույթի հայտարարում*<br>3. *Աշխատանքների իրականացում և վերահսկում*<br>4. *Մշտադիտարկում*<br>*Ծրագրի ավարտ՝աշխատանքների կատարման հանձնման-ընդունման ավարտական ակտերի կազմում, քննարկում և հաստատում:*<br>*Փաստաթուղթը մշակվում է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝*<br>- *ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի)* |

| | |
|---|---|
| | *գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի»,*<br>*- ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի»,*<br>*ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:* |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում, բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի** | *Ծրագրի իրականացումը կատարված ծախսերի չափով ազդեցություն կունենա հիմնական միջոցի արժեքի վրա: Ծրագրի իրականացման դեպքում համայնքի սեփականություն համարվող հիմնական միջոցի արժեքը կավելանա նախահաշվային արժեքի չափով: Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:* |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | *- Ծրագրի արդյունքում կունենանք Մրգաշեն համայնքի գլխավոր հատակագիծ, որի արդյունքում կկանոնակարգվեն՝*<br>*- բնակավայրերի և դրանց սահմաններից դուրս գտնվող կառուցապատման ենթակա հողերի նպատակային և գործառնական նշանակությունները, հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջները, սահմանափակումները,*<br>*- կառուցապատման հերթականությունը,*<br>*- հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման ձևերը,*<br>*առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման չափորոշիչները:* |
| **Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը** | *Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվի 1-2 ժամանակավոր աշխատատեղեր /հատակագծի մշակողներ/* |
| **Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը** | *Նախորդ տարվա բյուջեն՝ **82830200**դրամ.*<br>*Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:* |

| | Պլանը | Փաստացին | Տոկոսը |
|---|---|---|---|
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝** | 82830200 | 69409968.9 | 83.79 |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 82830200 | 69409968.9 | 83.79 |
| - Սեփական եկամուտներ | 33280300 | 22692568.9 | 68.18 |
| -Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 32424356 | 32496881 | 100.2 |
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝** | 99877895 | 95023436 | 95.1 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 82830200 | 65245156 | 78.76 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 49544576 | 29778280 | 60.1 |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝** | 49544576 | 29778280 | 60.1 |
| - գազի ֆիկացում | 19157358 | 19157358 | 100 |
| - ջրահեռացման համակրգի հիմնանորոգում | 8000000 | 962960 | 12 |
| - փողոցային լուսավորություն | 2000000 | 1022110 | 51.1 |
| - գյուղատնտեսություն | 824356 | 274400 | 33.28 |
| -միջհամայնքային փողոցների բարեկարգում | 3400000 | 3116000 | 86.5 |
| -պաշտպանություն | 300000 | 300000 | 100 |
| -վարչական սարքավորումներ | 2800000 | 2466450 | 88 |
| -շենք շինությունների վերանորոգում | 10776862 | 1069002 | 9.9 |
| - Նախագծահետազոտական և գեոդեզիական ծառ. | 2286000 | 1410000 | 61.6 |

| | |
|---|---|
| **Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն** | *111 096 109 դրամ.*<br>*Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը` առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*<br><br>*Պլանը* |

| | |
|---|---|
| | ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում***<br>*այդ թվում՝*<br>*- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* 87165000<br>*- սեփական եկամուտներ* 33380400<br>*- Ֆոնդային բյուջեի եկամուտներ* 13000000<br>***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* 111096109<br>*- Վարչական բյուջեի ծախսեր* 87165000<br>*-Ֆոնդային բյուջեի ծախսեր* 36931109<br>***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* 36931109<br>*- Շենքերի և շինությունների կառուցում* 10 000 000<br>*- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում* 22 931 109<br>*- Վարչական սարքավորումներ* 1 000 000<br>*- Այլ մեքենաներ և սարքավորումներ* 1 000 000<br>*- Նախագծահետազոտական ծախսեր* 2 000 000 |
| **Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | Բյուջետային եկամուտների անհրաժեշտ մուտք 2020 թվականի հողի օտարումից համայնքային բյուջե մուտքագրվել է 32 496 881 դրամ:<br>2021 թվականին կանխատեսվում է 25 000 000 դրամ: |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝**<br><br>**- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը ------դրամ,**<br><br>**- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ դրամ,**<br><br>**- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ դրամ,**<br><br>**- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ դրամ,**<br><br>**- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական** | *9 000 000 դրամ (100%)* |

| | |
|---|---|
| **վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ --- դրամ,**<br><br>**ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը __ դրամ** | |
| **Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը** | *5 400 000 դրամ (60%)* |
| **Այլ ներդրողներ** | |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | *Սկիզբը 2021թ.հունիս Տևողությունը 7 ամիս* |
| **Ծրագրի ծախսերը** | *Տեխնիկական բնութագիրը կցվում է* |
| **Ամսաթիվ** | *01.02.2021թ.* |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին** (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

**Մրգաշեն համայնքի տնտեսական պատասխանատու**
**Հեռախոսահամարը, հեռ. 077-01-00-12,**
**էլեկտրոնային փոստը** vahan-vap@mail.ru

---

**Համայնքի ղեկավար** **Վահան Պողոսյան**
(անունը, ազգանունը)

Կ. Տ

# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- Նախագծերը մշակվում են ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կազմով և բովանդակությամբ,

- հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները ներկայացվում են յուրաքանչյուր համայնքի (բնակավայրի) համար առանձին, նախագծերի տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացվում են ինչպես առանձին համայնքների (բնակավայրերի) մասով, այնպես էլ միկրոռեգիոնի համար,

- Տեքստային մասերը ներկայացվում են A4 ֆորմատով, Arial Unicode տառատեսակով, տեքստի տառաչափերը՝ h=12 կամ h=10, աղյուսակները համապատասխանաբար՝ h=10, h=8, տողերի միջև հեռավորությունը 1.0 կամ 1.15: Բացատրագրի առավելագույն ծավալը՝ 110 էջ:

- Նախագծերը համաձայնեցման են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ տեքստը՝ Microsoft Office Word, գծագրերը՝ AutoCAD և PDF ծրագրերով:

- ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստացած նախագծերը կատարողի կողմից ներկայացվում են համապատասխան մարզպետներին հաստատման՝ մեկական էլեկտրոնային և մեկական թղթային տարբերակներով,

- Հաստատված նախագծերը կատարողի կողմից հանձնվում են պատվիրատուին էլեկտրոնային կրիչներով՝ 15-ական օրինակ, թղթային՝ առնվազն հենակետային, հիմնական և գոտևորման գծագրերը մարզպետարանի և յուրաքանչյուր համայնքի համար մեկական օրինակի հաշվարկով: